ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01/1

ք. Երևան **«08» հունվարի 2016թ.**

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունն՝ ի դեմս ծառայության աշխատակազմի ղեկավար Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, (այսուհետ՝ Շնորհատու), որը գործում է սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ն**, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ (այսուհետ՝ Շնորհառու), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջով նախատեսված <<Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացում>> ծրագիրը՝ (այսուհետ՝ Ծրագիր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Շնորհառուին հատկացնել ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով **01.01.2016 – 31.12.2016թթ**. ընկած ժամանակաշրջանի համար նախատեսված ***347,892.3 /երեք հարյուր քառասունյոթ միլիոն ութ հարյուր իննսուներկու հազար երեք հարյուր/ հազ. ՀՀ դրամ գումար:*** Ծրագրի գնից **41,000.0 /քառասունմեկ միլիոն/ հազ. ՀՀ դրամ գումարը** Շնորհատուն փոխանցում է Շնորհառուի բանկային

հաշվին որպես կանխավճար, իսկ Շնորհառուն պարտավորվում է ծրագիրն իրականացնել սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Շնորհառուի կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի N1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Շնորհատուն իրավունք ունի

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու Շնորհառուի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Շնորհառուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար հատկացնելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Շնորհառուն ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Շնորհառուն երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.3.1. Նշված դրույթները չեն կարող հիմք հանդիսանալ սույն պայմանագիրը լուծելու և /կամ/ պահանջելու հատուցել պատճառած վնասները, եթե վերը նշված հանգամանքները տեղի են ունեցել Շնորհառուից անկախ պատճառներով կամ դրանում բացակայում է Շնորհառուի մեղքը:

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Շնորհառուն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Շնորհատուի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Շնորհատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Շնորհատուն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Շնորհառուին

2.3.2. կատարել ծրագրի (առաձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացված միջոցառման մասին N2 և N 4 հավելվածներով սահմանված ձևի ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան *որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:* Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Շնորհատուն հաշվետվությունն ընդունելու դեպքում *եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Շնորհառուին:*

2.3.4. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.4. Շնորհառուն պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Շնորհատուի կողմից տրամադրված գումարների՝ *Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.*

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Շնորհատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը Շնորհատուին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Շնորհատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Շնորհատուի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Շնորհատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «<<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Շնորհատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Շնորհատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով շնորհառուին տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Շնորհատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Շնորհառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1.Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է Ծրագրի կատարման համար Շնորհառուին որպես դրամաշնորհ տրամադրել **347,892.3 /երեք հարյուր քառասունյոթ միլիոն ութ հարյուր իննսուներկու հազար երեք հարյուր/ հազ. ՀՀ դրամ գումար** սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 3 հավելվածին համապատասխան:

Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը Շնորհառուն Շնորհատուին է ներկայացնում *մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը:*

4.2 Հաշվետու ամսվա փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ Շնորհառուի կողմից ներկայացված հաշվետվություններն ընդունելուց հետո Շնորհատուն հաջորդ ամսվա վճարման ենթակա գումարը որպես կանխավճար վճարում է Շնորհառուին: Ընդ որում, եթե ներկայացված փաստացի ծախսերի գումարը մեծ է կամ հավասար վճարված կանխավճարին, ապա սույն պայմանագրի N 3 հավելվածով տվյալ ամսվա համար նախատեսված գումարը վճարվում է ամբողջությամբ, հակառակ դեպքում այն նվազեցվում է կանխավճարի և փաստացի ծախսերի գումարների տարբերության չափով:

4.3. Շնորհառուին վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին N4 հավելվածով սահմանված ձևի հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն N 3 հավելվածի:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, եթե դրանում առկա է Շնորհառուի մեղավորությունը, Շնորհառուն պարտավորվում է Շնորհատուին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Շնորհառուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Շնորհատուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է շնորհառուին վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՇՆՈՐՀԱՏՈՒ	ՇՆՈՐՀԱՌՈՒ
ՀՀ ԳՆ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ Ք. Երևան, Կոմիտաս 49/2 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն ՀՎՀՀ 00454227 Հ/հ 900011404051	«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ Ք. Երևան, Էրեբունի 12 ՀՎՀՀ 00403436 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ Հ/հ 1930045369860100
Աշխ. ղեկավար՝ _____ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ /ստորագրություն/ Կ. Տ.	Տնօրեն՝ _____ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ /ստորագրություն/ Կ. Տ.

Հավելված N 1
2016 թվականի հունվարի 8 -ին_ կնքված
N 01/1 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	Պահանջվող գումարը /հազ. դրամ/
1.	Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացման ծրագիր	Ծրագրի նպատակը՝ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից հատկացվող դրամաշնորհը պայմանավորված է կենդանիների վարակիչ հիվանդությունների, համաճարակային վիճակը բարելավելու, մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչությանը պաշտպանելու, անասնաբուժական տեսակետից բարորակ անասնապահական արտադրանք ստանալու, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների ապահովման նպատակներով □Հանրապետական	Ծրագրավորվում է իրականացնել գյուղատնտեսական կենդանիներից վերցված արյան նմուշների մանրէաբանական, քիմիաթունաբանական, շիճուկաբանական լաբորատոր հետազոտություններ և ախտանատոմիական ուսումնասիրություններ, պատվաստված կենդանիներից արյան նմուշառումներ, արյան շիճուկների լաբորատոր հետազոտություններ, լաբորատոր պարագաների /միջոցների/ ձեռքբերում, կենդանական և բուսական ծագման մթերքների, սննդամթերքների,՝ բույսերի և մշակաբույսերի	Ծրագրի իրականացումից ակնկալվում է՝ 1. Գյուղատնտեսական և ջրային կենդանիների հիվանդություններից զերծ գլխաքանակի առկայություն: 2. Գյուղատնտեսական և ջրային կենդանիների որոշ վարակիչ հիվանդությունների ախտորոշման հավաստիության 95-98%-ի ապահովում: 3. Որոշ էնդեմիկ վարակիչ հիվանդությունների նկատմամբ լաբորատոր ստուգում անցած անասնագլխաքանակի, կենդանական և բուսական ծագման հումքի և նյութի, սննդամթերքի առկայություն: 4. Կարանտին, առավել վտանգավոր վնասակար օրգանիզմների և թաքնված վարակի հայտնաբերման հավաստիության 95-98%-ի ապահովում:	31.12.2016	347,892.3

		անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոնը ՊՈԱԿ-ին իր կանոնադրական խնդիրների իրականացման համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությամբ:	փորձանմուշների լաբորատոր հետազոտություններ առավել վտանգավոր, վնասակար օրգանիզմների և թաքնված վարակի հայտնաբերման նպատակով, հանրապետության տարածքում գործող վաճառքի կետերում իրացվող թունանյութերի, ազդող նյութի որոշման լաբորատոր փորձաքննություններ, գույքի, ախտահանիչների և այլ պարագաների պահպանության և բաշխման հետ կապված գործառույթներ:	5. Հանրապետության վաճառքի կետերից վերցված նմուշներում թունանյութերի, ազդող նյութերի որոշման հավաստիության 95-98%-ի ապահովում: 6.Գույքի, ախտահանիչների և այլ պարագաների պահպանության և բաշխման ժամկետների ապահովում:		

ՇՆՈՐՀԱՏՈՒ	ՇՆՈՐՀԱՌՈՒ
ՀՀ ԳՆ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ Ք. Երևան, Կոմիտաս 49/2 ՀՎՀՀ 00454227 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/հ 900011404051 Աշխ. ղեկավար՝ _____ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ /ստորագրություն/ Կ. Տ.	«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ Ք. Երևան, Էրեբունի 12 ՀՎՀՀ 00403436 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ Հ/հ 1930045369860100 Տնօրեն՝ _____ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ /ստորագրություն/ Կ. Տ.

Հավելված N 2
2016 թվականի հունվարի 8 -ին_ կնքված
N 01/1 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմին՝ ***ՀՀ ԳՆ Մննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ***

Ծրագրերի անվանումը՝ ***«Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացման ծրագիր»***

/հազ. հատ/

Նկարագրությունը	*Միջոցառման անվանումը*	*Չափի միավորը*	*Նախատեսվում է իրականացնել 2015 թվականի ընթացքում, ընդ որում՝ աճողական*			
			I եռամսյակ	I կիսամյակ	ինն ամիս	տարի
			քանակը	*քանակը*	*քանակը*	*քանակը*
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացման ծրագիր	*Լաբորատոր փորձաքննության միջոցառումներ*	*հատ*	*156,412.0*	*406,412.0*	*656,412.0*	*936,600.0*

Հավելված N 2
2016 թվականի հունվարի 8 -ին_ կնքված
N 01/1 պայմանագրի

ՇՆՈՐՀԱՏՈՒ	ՇՆՈՐՀԱՌՈՒ
ՀՀ ԳՆ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ Ք. Երևան, Կոմիտաս 49/2 ՀՎՀՀ 00454227 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/հ 900011404051 Աշխ. ղեկավար՝ _____ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ /ստորագրություն/ Կ. Տ.	«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ Ք. Երևան, Էրեբունի 12 ՀՎՀՀ 00403436 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ Հ/հ 1930045369860100 Տնօրեն՝ _____ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ /ստորագրություն/ Կ. Տ.

Հավելված N 3
2016 թվականի հունվարի 8-ին կնքված
N 01/1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Հիմնարկի անվանումը

ՀՀ ԳՆ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազ

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախ
04	02	01	10	105042

3.Հիմնարկին սպասարկող գանձապետական բաժանմունքի անվանումը

ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

4. Գանձապետական բյուջետային հաշվի համար՝ ***900011404051***

Ծրագրերի անվանումը՝ ***«Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացման ծրագիր»***

/հազ. դրամ/

հ/հ	Ձեռք բերվող ծառայությունների անվանումը	Բյուջետային ծախսերի դասակարգման հոդվածը	Ընդամենը կարելիան	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեից, ընդ որում՝ աճողական											
				I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ		
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	2	3	4		5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	**Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացման ծրագիր**	4637	**347,892.3**	41,000.0	41,000.0	58,098.0	86,998.0	115,898.0	145,071.1	175,971.1	204,871.1	232,044.2	270,044.2	308,044.2	**347,892.3**

Հավելված N 3
2016 թվականի հունվարի 8 -ին_ կնքված
N 01/1 պայմանագրի

Շ Ն Ո Ր Հ Ա Տ Ո Ւ	Շ Ն Ո Ր Հ Ա Ռ Ո Ւ
ՀՀ ԳՆ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ Ք. Երևան, Կոմիտաս 49/2 ՀՎՀՀ 00454227 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/հ 900011404051 Աշխ. ղեկավար՝ _____ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ /ստորագրություն/ Կ. Տ.	«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ Ք. Երևան, Էրեբունի 12 ՀՎՀՀ 00403436 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ Հ/հ 1930045369860100 Տնօրեն՝ _____ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ /ստորագրություն/ Կ. Տ.

Հավելված N 4
2016 թվականի հունվարի 8 -ին_ կնքված
N 01/1 պայմանագրի

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՀ ԳՆ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության

աշխատակազմի ղեկավար՝ _____ Հ. Գևորգյան
/ստորագրություն/

Կ. Տ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 01/1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

«___» _____ 20 թ.

ՀՀ ԳՆ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (Շնորհատու) և «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի (Շնորհառու) միջև կնքված դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին « » 20 թ._ թիվ պայմանագրի շրջանակներում Շնորհառուն « » 20 թ. մինչև « » 20 թ. ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծախսերը.

Հավելված N 4
2016 թվականի հունվարի 8 -ին_ կնքված
N 01/1 պայմանագրի

N	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը	Չ/մ	Փաստացի կատարված ծախսեր	Պայմանագրով նախատեսված և փաստացի կատարված ծախսերը աճողական /հազ.դրամ/		Կատարման ժամկետը /աճողական/	
			Ընդամենը գումարը /հազ. դրամ/	Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի
1.	Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ	հ/դ					
2.	Եկամտային հարկ	հ/դ					
3.	Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	հ/դ					
4.	Էներգետիկ ծառայություններ	հ/դ					
5.	Կոմունալ ծառայություններ	հ/դ					
6.	Կապի ծառայություններ	հ/դ					
7.	Ներքին գործուղումներ	հ/դ					
8.	Մեք. և սարքավ. ընթ. վերան.	հ/դ					
9.	Գրասենյակային նյութեր և հագուստ	հ/դ					
10.	Տրանսպորտային նյութեր	հ/դ					
11.	Առողջապահական և լաբորատոր նյութեր	հ/դ					
12.	Այլ հարկեր	հ/դ					
13.	Նպատակային սոցիալական վճար	հ/դ					
14.	Պարտադիր այլ վճարներ	հ/դ					
15.	Այլ ծախսեր	հ/դ					
Ընդամենը							

«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի

Կ. Տ. Տնօրեն՝ _____ Գլխավոր հաշվապահ՝ _____